

16376

ԱՆԱՏՈՂԻՒՄ ՕՍՏ. ԵՐԿԱՐՈՒԴԻՈՅ
ՀԱՅ ՊԱՇՏՈՆԵՒՑ
ԱԶԳՈՎՈՒՏ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՅՆՈՒՄ. 1906 ՀՈԿՏ. 95ԻՆ
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ՀԱՅԱՍՏ-ՓԱՇԱ.

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1910-1911

1911 Յունիս 9/22 Հիմքաբրի, ընդհանուր
ժողովի նախն մեջ կարդացուած



Կ. ՊԱԼԵՎ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՀՕԼՅՈՒ
1911

361
Q-57

17

361
Q-57

Ա

ԱՆԱՏՈԼՈՒԻ ՕՍՄ. ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ

ՀԱՅ ՊԱՇՏՈՆ ԷՒՑ

ԱԶԳՈՎՈՒՏ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԴ 1908 ՀՈՒՏ. 2516.

ԿԵՊՐՈՒՍԵԳԻ ՀԱՅԱՍՏԱՆ-ՓԱՇԱ.

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1910-1911

1911 Յունիս 9/22 Հինգշաբթի, ընդհանուր
ժողովի նսխին մեջ կարդացուած



Կ. ՊԱԼ. ՊՈ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ 6. ՀՕԼ. ԱՅ

1911

2010

7030

ԿԵՐՊՈՒԱԿԱՆ ԴԻՒԱՆ

Պատուակալ Նախագահ
ԱՆՏՈՆ Էֆ. ԹԱՐԱԳ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Էֆ. ՈՍԿԵԱՆ ԱՏԵԲԱՎԵՏ
ԴԵՄՐԴ Էֆ. ՔԵՐԵՍԹԵԼԵԱՆ ԴԵՐ-ԱՏԵԲԱՎԵՏ
ՀԵԽՈՆ » ՊԱՊՈՆԵԱՆ ԱՏԵԲԱՎՈՒՐ
ԿԱՐՈՊԵՏ » ԱԴԱՄԻ ԳԱՅԱՎԵԼԵՏ
ՆԵՐԱԿՄ » ԱԼԱԶՎԵՐՏԵՐԴԱԼԻ ՀԱՅՈՒԱԿԱԼ
ՀՐԱՆՏ » ԹԵՐՁԵԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԽԱՐՀՐԴԱՍԱԻՑ ԱՆԴԱՍՄԱՐ

ԳՐԻԳՈՐ Էֆ. ԱՍԼՈՆԵԱՆ
ԳՐԻԳՈՐ » ԱՂԼՈՒԵԱՆ
ԵԳՈՒԱՐԴ » ՄԻՀՐԱՆ (ԽՐԱԺՄԱՐԵԱԼ)
ԶՈՐԵՀ » ՅՈԿՈԲԵԱՆ
ԼԵԽՈՆ » ԳԵՎՈՆԵԱՆ
ԽՈԶԻԿ » ԱԲՐՈՀԱՄԵԱՆ
ԿԱՐՈՊԵՏ » ԱԴԱՄԵԱՆ
ՀՐԱՆՏ » ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

2002

1286
39

ՅԱԿՈԲ » ԹՈՐՈՍԵԱՆ
ՅԱՐԱՒԹԻՒՆ » ՊՈՒՐՆԱԶԵԱՆ
ՅՈՎՀՅՈՒՆԻՍ էֆ. ՊՈԼԵԱՆ
ՅՈՎՀՅՈՒՆԻՍ » ԱՐԵՒԵԱՆ
ՊԵՏՐՈՍ էֆ. ՅՈՎՆՈՒԵԱՆ
ԳՈՀՐՈՄ » ԱԼԹՈՒԵԱՆ
ՕՆԻԿ » ՅՈՎՀՅՈՒՆԻՍԵԱՆ

ՄԱԿԱՐԱՋԻՆԴՐ

Խզիս

ՅԱԿՈԲ էֆ. ԱՄՊԱՐԵԱՆ (Գործադիր անդամ)
ԱՏԱ-Բազար
ԳԱԼԻԹ էֆ. ԲԱՐԵՍԲԱՍԵԱՆ (Գործադիր անդամ)
Պիլենիկ
ԱՐԱՄ էֆ. ԻԳՆՈՏԻՌՈՍԵԱՆ
Էսկի-Շենիր
ՍԵՐՈՎԲԻ էֆ. ՀԱՄԲԻԿԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԳՈՄՔՐ » ՆՇԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԿՈՐԱՊԵՏ » ՏԵՏԵԿԵԱՆ ԳանձապԵՏ
ԱՆԴՐՈՆԻԿ » ՎՈՐԴՈՒԿԵԱՆ (Գործադիր անդամ)
Գոնիս
ՅԱԿՈԲ էֆ. ՊՈՐՍՈՄԵԱՆ (Առ.Ժ. գործադիր անդամ)

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸՑ ԱԶԳՈՒԹՈՒՏ ՄԻԱՅԻՆ
ԱՆԱՏՈԼՈՒԻ ԵՐԿԱՅՈՒՂԻՈՅ ՀԱՅ ՊԱՇՏՈՆԻՑ

Ազգօգուտ Միութեան Կեդրոնական Դիւանը
Հայտար-Փաշայի մէջ 1911 Մայիս 22, կիբակի
օրը, իր անդամները բնգչանուր ժողովի հրաւիրե-
լով հանդերձ, մեծամասնութիւնն գոյացած ըլլա-
լով հարկագրուեցաւ երկրորդ անգամ նիստի հրա-
ւիրել 1911 Յունիս 9/22, Հինգշաբթի իրիկուն։
Ատեանը բացուեցաւ ժամը 5¹/₂ ին (լ. Ե .) ներկայ
էին 73 անդամներ, նախապէս պատրաստուած
օրակարգին համաձայն նաև ընարեց իր առժամ-
եայ դիւանը, Ատենապետ անուանելով Տ. Յ.
Պալեան և Ատենապելիր Տ. Հ. Մատէնոսեան։

Հրաժարեալ Դիւանի ատենապելիր Տիար Լեւոն
Պապօնեան կարգաց իրենց միամեայ գործունէու-
թեան տեղեկագիրը և կատարուած բոլոր գոր-
ծառնութեանց մանրամասն հաշուետուութիւնը։

Ժողովը անցաւ կանոնագրով կարգ մը բարեփոխելի յօդուածներու քննութեան խնդրոյն և ներկայացուած երկու առաջարկներէն այսինքն Ա. Նախ ընդէ . ժողովի մէջ քննել խնդիրը և Բ. յանձնաժողով մը կազմի որ քննէ ամբողջ կանոնագիրը և կարեւոր բարեփոխումները առաջարկէ ընդհանուր ժողովի ի քննութիւն և ի վաւերացում . մեծամասնութեամբ ընդունուեցաւ այս վերջին առաջարկի : Ժողովը քուէի միջոցաւ ձեռնարկեց յանձնաժողովի անդամներու ընտրութեան և ընտրեց .

- Տեարք՝ 1. Լեւոն Պապօնեան
- 2. Հրաչեայ Տէրոսկի
- 3. Լեւոն Փափագեան
- 4. Միհրան Հէօքէոլէկեան
- 5. Լեւոն Գէվոնեան

Յետու ժողովի սկսու կեդրոնական նոր Դիւանի անդամներու քուէնամարի գործողութեան և քուէլց մեծամասնութեամբ ընտրուեցան .

- 1. Անասն էֆ . Թարաք , Պատուակալ Նախագահ .
- 2. Յարութիւն էֆ . Ուկեան . 79 քուէ , Ատենապետ .
- 3. Գէորգ էֆ . Քէրէսթէնեան 64 քուէ , ԳերԱտենապետ .
- 4. Լեւոն էֆ . Պապօնեան , 57 քուէ , Ատենապետ .
- 5. Լեւոն էֆ . Փափագեան , 70 քուէ , Հաշուակալ .
- 6. Կարապետ էֆ . Աղասի , 77 քուէ , Պանձապետ .

Վերայիշեալ ընտրութեանց արդիւնքը ընդհանուր ժողովը ծափահարութեամբ ընդունեց սակայն Ուկեան էֆ . իր ծանրածանը զբաղումնեական պատճառաւ հրաժարեցաւ և պնդեց իր հրաժարականին վրայ . հրաժարեցաւ նաև Քէրէսթէնեան էֆ . : Ատենադպիր Լեւոն էֆ . Պապօնեան մէջ բերելով Աղդ . Միութեան հիմնարկութեանէն ի վեր անդադար գործոն գեր մը սոսանձնած լլալը , չնորհակալութիւն յայսնելով ընդհանուր ժողովի իր մասին արտայայտած վստահութեան համար , անդանապի կերպով ներկայացուց իր հրաժարականը :

Հակառակ Ուկեան , Քէրէսթէնեան և Պապօնեան էֆ ներու իրենց հրաժարման մասին մինչեւ վերջը պնդելուուն , ընդհանուր ժողովը միաձայն հաւանութեամբ բայցարձակապէս մերժեց զանոնք և խնդրեց որ գէթ առժամապէս շարունակեն անոնք իրենց պաշտօնը :

Օրը արգին արաժամած լլալով Ատենանը վակուեցաւ ժամը 9¹/₂ին :

Ի պիմաց առժամեայ պիւանի	Ատենանը
Ընդի . Ժողովոյ	Ատենանը
Ազգօգուտ Միութիւն	Ատենանը
Ատենապիր	Ատենանը
ՀՄ. ՄԱՏԹԷՍՈՒԵՆ	ՅՈՎ. ՀԱՅՈՒԵՆ

ԱԶԳՈԳՈՒՏ ՄԻՈՒԹԻՒՆ

Ա.ՏԵՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՆԴՀԱՆՈՒԹՅ ԺՈՂՈՎԻ

Խ Ր Կ Ր Ո Ր Գ Շ Խ Ա Տ

9/22 Յունի 1911

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնարութիւն Ըստ։ Ժողովի Դիւանի.
2. Տեղեկագիր և 11 Մարտ 1910 — 22 Յունի 1911 ասրեցընի հաշուելուի վաւերացում։
3. Առաջարկութիւն կանոնագրի բարեփոխութեանց։
4. Հանրագիր-առաջարկ ի մասին նիւթական աշակցութեան ոռուածայ կալմանաւորներու։
5. Բնարութիւն կեղրանական դիւանի։

Այսօր, Հինգչարթի 9/22 Յուն. 1911, ժամը 5ին (Բ. Ե.) ի Հայութ-Փաշա, Անասոլուի օոմ. երկաթուղոյ Ազգօգուտ Միութեան ընդհ. ժողովը իր արեկան նիստը գումարեց կանոնագրի 19րդ յօդուածի արամազրութեան համաձայն եղած հրաւերն վրայ։

Դիւանը առժամապէս կազմուեցաւ հետեւալ զերպով Աստենագիր Տիար Յովհաննէս Պալեան Աստենագիր » Հմտ եակ Մատթէուսեան Քուէախոյզ Տեարք՝ Հրաչեայ Տէրոսկի, Լեռն Գևորգեան, Հրանդ Յովհաննէսեան, Յովհաննէս Սրեւեան, Վահան Մեծա ոռուեան, Միհրան Հէօսքէլեքեան, Մանուկ Էլմասեան։

Ժողովը օրինաւորապէս հրաւերուած իւ գումարուած ըլլալով, բայ կանոնագրի 19րդ յօդուածին, հրամարեալ դիւանի աստենագիր Ասկեան էֆ. կը հրաւերէ Աստենագիր Լեւոն էֆ. Պալունեանը կարգալ Կելլունական Դիւանի արեկան տեղեկացիրը և 1910-1911 ասրեցընի հաշիւները։

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱԶԳՕԳՈՒՏ ՄԻՈՒԹԵԱՆ

Միութեանս ընդհանուր ժողովը, իր կանոնագրի 19րդ յօդուածի տրամադրութեան համաձայն պարտ էր իր առքելան ընդհ. ժողովը գումարել 1911 Մարտ 11ին (Ն. Տ.)

Կանոնագրին նախառեսած պայմանաժամկեր թէել լրացած է 2 ամիսէ ի վեր՝ սակայն կեդրոնական Դիւանս իր ձեռնարկած վերակազմութեան գործը աւարտելու և մանաւանդ 0սմ. Առաջմանագրական Պետութիւնն Ազգօգուտային պաշտօնական վաւերացումը ձեռք ձգելու համար անհրաժեշտ նկատեց այն կրկարածումը և զար սաացանք գեռ քանի մը օրեր առաջ :

Նախ և առաջ պէտք կ'զբանք յիշել այն պարագաները որոնց մէջ Ազգօգուտ Միութեան Վարչութիւնը յանձնուեցաւ մեղի, առանց ծանրանա-

լու մանրամասնութեանց վրայ, անցողակի յիշենք այն ցաւալի գլւրիմացութիւնները միութեան անգամներու մէջ, որ պատճառ եղած էին ի՞նչ ի՞նչ անկարգութեանց որոնց ողղակի արդիւնք ըլլալով գժբաղդաբար Միութիւնը շատ առւժած էր և հետի էր փայլուն վիճակ մը ունենալէ :

Հետեւաբար մեր առաջին գործը եղաւ նախ այն թիւրիմացութիւնները և անձնական երկպատակութիւնները բառնալ և բերել բազար անգամները ի համերաշխութիւն գործելու համար իբրեւ մի մարմին ի նպաստ ազգօգուտի գործունէութեան .

Հստ որում հիմնական վերակազմութեան մը պէտքը անհրաժեշտ տեսանք, վերակազմութիւն՝ որ մնձ ձիգերու և անգուլ աշխատութիւններու կը կարուել, որուն առինչը մեր ամրող ուժը և որ զբաղեցուց զմելզ զրեթէ ամրող մեր չբանին մէջ։ Սւելցուցէք նաև առանց վրայ Միութեան ընթացիկ գործառնութիւնները բացայցաւ պիտի տեսնէք թէ ի՞նչ տատիճան կննուա վիճակի մը մէջ զանուեցանք մեր պաշտօնավարութեան առաջին օրերուն։ Սակայն այսօր կրնանք բերկրութեամբ յայտաբարել թէ բարեբաղդաբար յաջողեցանք մեր այս գժուարին գործին մէջ և կը հեռանանք զիւանին, որտի անհուն բերկրութեամբ և խղճի կատարեալ հանդարտութեամբ :

Կեզրոնակոմն Դիւանը իր պարտքը լիովին կա-
տարեց և կը համարձակինը, աղնի՛ւ Պաշտօնա-
կիցներ, այսօր Զեզի աւետելու թէ «Ազգօգուտ
Միութիւնը». վերահաստատուած է ամուր հիմերու
վրայ, անոր ապագան ապահովուած է և մենք ու-
րախ ենք հաստատելու որ մեր ամենու սրտին
շատ ժօտիկ եղու Ազգօգուտը յառաջդիմութեան
խոսամիալից ճամբան մէջ կը գտնուի: Բայց ինչ
որ ալ ըլլայ՝ ստոյդ է և մենք ասիկա հաճոյքով
կը խոսառվանինք թէ, մեր պաշտօնավարութեան
առաջին օրէն սկսեալ, դիւանս ըրաւ ինչ որ կա-
րելի էր և երբեմն փորձեց իսկ ընել անկարելին՝
արդարացնելու համար իր կոչումը ինչպէս և յոյ-
սերը որ իր վրայ դրուած էին: Եւ ասիկա անտա-
րակոյս, չնորհիւ այն բարեհաճ ընդունելութեան
գոր Միութիւնն գտաւ րուղոր մեր պաշտօնէտութեան
կողմէ: ինչպէս նաև այն վեհանձն օժանդակու-
թեան գոր Միութիւնն իզմիափ, Ատաբազարի,
Պիլէճիկի, էսկի-Շէճիրի և Թօնիայի մատնաճները
չի զլացան իրեն:

Իւսկեւարի Միութէսարբթութիւնը միշտ հա-
մակրանքով վերաբերուեցաւ Միութիւնն հանդէպ,
և ասոր թանկարին ապացոյցը տուաւ, հաստա-
տելով անոր կանոնագիրը և ճանչնալով մեր ձեռ-
նարկին հանրային օգտակարութիւնը:

Կ. Պոլսոյ նախորդ Պատրիարք՝ Դաւրեան Ալբ-
րագան իր բոլոր Պատրիարքութեան շրջանին հա-
ձեցաւ միշտ համակըր վերաբերում մը արտայայ-
տել և իր օրհնութիւններով յաճախ քաջալերել
Միութիւնս:

Նոյնպէս, բարենպատակ Ընկերութիւններ և
հաստատութիւններ համակիր զգացումներով միու-
թեանս գործունէութիւնը գնահատելով առաջարկ-
ներ բերին իրենց ի նպաստ նիւթական օժանդա-
կութիւններ խնդրելով, սակայն Միութիւնս միշտ
իւր նախաձեռնութեան յետամուտ ստիպուեցաւ
մերժել զանոնք, իւր սրոշ ծրագրին և առաջա-
գրուած ն գատակին միայն արամազգելու համար
իւր հասոյթները, սակայն անցազակի կը փութանք
միշել թէ յաճախ բարեմիրական ձեռնարկութիւնն-
ներու ի նպաստ օգնութիւններ կ'առաջարկուի, և
գուանս ընականաբար միշտ չլարենալով մերժել և
ո՛չ ալ մրութեան մնտուկին վերագրել զանոնք
կ'ստիպուի ինքն անձնապէս ստանձնել: Տեղական
մամուլն ալ ի՛նչ ինչ առիթներու մէջ մատնանշեց
և ի վեր հանեց մրութեանս կարեւորութիւնը և
օգտակարութիւնը և հաճայակասօրէն օրը օրին
հրատարակեցին Ազգօգուտին վերաբերեալ բոլոր
տեղեկութիւնները և այսպէսով կրցան երկաթուղ-
ուոյ ընդհանուր հայ-պաշտօնէութեան ուշագրու-

թիւններն հրաւիրել մեր բարեսիրական և նուիրական ձեռնարկին վրայ :

Կեզրոննական գիւտանս չէ կարող իրեն յայտնուած թանկապին գնահատութերուն այս համարատութեան մէջ, լրութեամբ անցնի այն ջերմ վնարաբերութին և համալիր արամադրութիւններուն, զսր յայց տուին իրեն բալոր հայ պաշտօնէութիւնը : Ահա ատոր բացայալու տպացրցց :

Ազգօգուափ Վարչութիւնը մեզի յանձնուած պահուն, Միութրւնս ունէր 252 վճարող անդամներ միայն, ներկայ շրջանին աւելցան 96 նոր անդամներ 427 դրուշ նոր ամսավճարներով : Հետեւաբար այժմ միութեան մասնակցողներուն թիւը կը բարձրանայ 348ի :

Ամսավճարներու գանձմանց կանոնաւորութեան համար անհրաժեշտ նկատելիքնք «Հաշուեցուցակներու գրութիւնը» որ չափ արդիւնաւոր եղաւ, ինչպէս նաև յաջողեցանքը՝ 4 ٪ առկոսով մըութեանն հասոյթիւները գերմանական գրամառան մէջ ի պահ զնել Ազգօգուած միութեան անուամբ, ուրիշ ներկայ շրջանի մէջ գրիթէ Շ օսմ. ուկոյ շահ մը գոյցաւ :

Ամեն . Տ . Դուրեան Սրբազնն Պատրիարքի մասնաւոր հրաւերին վրայ անցեալ Մայիս 24ին Ազգ . Սահմանադրութեան յի՞նսամեայ յորելինի օրը Ազգօգուած Միութիւնը պաշտօնապէս ներկայացուելով՝ 5 օսմ. ուկոյ նոււիրատութիւն մը ըրաւ, Ազգ . որբանոցի ի նպաստ :

ԲԱՑՈՒՄ

ԱԶԳՕԳՈՒՏ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ԿԵԼԻՔ-ԿԻՎԶԱՅՈՒՆԻ ՄԵՋ (ՍՍ.ՍՈՒՆ)

Անցեալ 1910 Մայիս ամսոյ մէջ միութիւնս բարերազգութիւնը ունեցաւ իր անուամբ Կելիէ-կիւզանի մէջ նախակրթաբանի մը հիմնարկութիւնը ողջուներու, 30 օսմ. ուկոյ արքիթոշակով մը :

Նախորդ գիւտանի կողմէ սկզբամայր ընդունուած այս գաղափարն մեր կողմէ գործածութեանը առաջիւնուեցանք բարձրամիտ գնահատական նամակներ, մեր մասնամիտներուն անդամներուն պաշտօնական մարմիններու կողմէ :

Մեր այս կարեւոր ձեռնարկը ընականաբար չէր կընար անստարբեր ձգել մեր հեռաւոր պաշտօնակիցները, որ գէպի մեր Ազգօգուածը իրենց տածած սէրն ու անձնուիրութիւնները կրկնապատկեցին :

Կելիէ-կիւզանի մեր գործոցին առաջին արքեշրջանի աեղեկագիրը, ստորագրուած Մուշի ընդհ. վանահայր և առաջնորդ Գեր . Տէր Ներսէս Սրբազնն եպսէլ . Խարախաննեանի և ընդհ. ահաւէ Պէտ .

Սիմէռն Զաւարեանի կողմէ, մեր վերջին նիստին
մէջ մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ ըլ-
լալով՝ որոշուեցաւ մեր Աստաբազարի մասնաձևողին
վարիչ գործադիր անդամ Տիար Դաւիթ Բաբէնա-
քառականի դէպի Մուշ ճամբարութենէն օպառուելով՝
Ազգօգուտափ պատուիրակ նշանակել վինքը, հար-
կաւոր ուսումնասիրութիւնները տեղւոյն վրայ
կատարելու և անժիջական կարգադրութիւնները
ընելու կրկնակ պաշտօններավ, աւելի զարկ մը
կարենալ ապօք համար մեր այս կրթական գոր-
ծին :

Միութիւնս իր հիմնարկութենէն ի վեր բանա-
պետական բէժիմին ուղղակի և ախուր արդիւնքը
եղող աղետեալներու, տիեզերու և կարուեալ-
ներու պէտքերուն փոքր ու աննշան գործուում
մը տալու մահանգութեամբ միայն կրցած էր զրա-
գիլ, այս՝, մեր Ազգօգուտաք ևս կիլիկիյ հաղա-
րաւոր աղետեալներու աղեխարչ թշուառութենէն
փոքր մաս մը պահիկ մը ամոքելու համար փու-
թացած էր իր ամբողջ պատրաստ զրամը տրա-
մազրել և մնաւուկը պարպել, սակայն և այնպէս
մեր գործի աարբեր պաշտօն մը ուներ կատարե-
լիք, և տարբեր կոչում մը՝ հայ յետամնաց բա-
սակարգերուն գործնական դասախարակութիւն մը

կարենալ տալու, հողագործութեան նոր գիտելիք-
ներուն ընտելացնելու և գործնականին մէջ անոնց
հայթայթելով գործիքներ, լծկան կենդանի ևն :

Ազգօգուտ Միութիւնը իր 6 Յուլիսի նստին մէջ
իրագործեց իւր վերոյիշեալ նպատակներէն մին
նաև նկատողութեան առնելով Գեր. պատրիար-
քական փոխանորդ հօր 1924 թիւ պաշտօնագիրն և
Մուշի օսմ. երեսիոխան Գեղամ էֆ.ի յանձնարա-
զիրն. 6 օսմ. ոսկի արժէքով լծկան կենդանի նույիրե-
լով Սանոյ, Տաւորիկի էգ ու տուն գիւղէն Տօնօ
Սուքիասեանի : Այս Մշեցի քաջարի երիտասարդը
սակայն ամիսներէ ի վեր անյայտ գտնուելուն
պատճառաւ տոյն որոշումը չէր կրցած գործադ-
րուիլ : Սակայն վերջին պահուն ազգ. պատրիար-
քարանի պաշտօնագրոյն համաձայն յիշեալ իրեան
ելած ըլլալով, որոշուեցաւ կարեւորն ընդփոյթ գոր-
ծազրել :

Հ Մեր 16 Օգոստոսի 1910 նստին մէջ, Միու-
թիւնս իւր պաշտպանութեան տակ առաւ Հա-
նցի, ջարդէ մազապուր աղասած, ի հօրէ և
ի մօրէ որք, Ռւգունեան Սիմօն անուն, 18 տա-
րեկան պատանին, յանձնարարեալ օսմ. գեղար-
ուեստից վարժարանի ներքին տեսչութեան և Ար-
մաշու դպրեվանուց ներքին անօրէն և Արարկիրի
Առաջնորդ Գեր. Գարեգին Ծ. Վրդ. Խաչատրեանի
կողմէ :

Սակայն դժբաղվաբար, իսեղճ խոստմալից որբ պատանին, հազիւ Ազգօգուտի թեւարկութիւնը ընդունած անբուժելի հիւանդութեան մը զոհ գնաց : Տարաբաղդ Ուզունեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Ա. Փրկչի մատրան մէջ, կեդրոնական դիւանի անդամոց ներկայութեան :

Ասոնցմէ զատ Միութիւնս խորհրդակից անդամ Տիար Յովհաննէս Պալեանի առաջարկութեան վրայ գտաւուցի կարօտ ուսանողներու ի նպաստ հիմնուած ֆօնտին քուէարկեց 10 օսմ. ուկւոյ մրանուագ նուէր մը, իսկ բարեգործականի նախաձեռնութեամբ հիմնուելիք վարժապետանոցի ի նպաստ աարելան 15 օսմ. ուկւոյ գումար մը :

Փորձառութիւնը մեղի ցոյց տուած ըլլալով թէ օդակար պիտի ըլլայ մեր կանոնագրի քանի մը յօդուածները բարեփոխել, դիւանս յետ խորհրդակցութեան կ'ենթարկէ սոյն փոփոխութիւնները զոր կ'առաջարկուի յօդ. 1. Բ. պարբ., Գ. պարբ. 2, 3, 4, 10, 11, 13, 17, 19, 20, 26, 27, 28, 30, 32, 35, 37 ևն. յօդուածներուն համար և որոնց մասին պատրաստ ենք Զեղի տալու ուզուած բացատրութիւնները :

Իսկ 24րդ յօդուածը ջնջուած է կառավարութեան կողմէ :

Վերջացնելէ առաջ այս տեղեկագիրը, արժան կը դատենք նետեւեալ հաշուեկշիռը ներկայացնել Զեղ, որպէս զի մանրամասնօրէն գիտակցութիւնը ունենաք ցարդ հաւքուած գումարներու ելեւ մուտքին :

ՀԱՅՈՒԹԵԿԾԻՄ ԱԶԳ

ՄՈՒՏՔ

դահնեկան արծար

Նախորդ շրջանէ պատրաստ դրամ	10,723.75
Ամսավճարներէ	19,288.50
Մասնաւոր նուիրատուութիւններէ	353
«Ապտիւլ Համիս Բ. զրքի վաճառումէ	114
Նախորդ գիււանի օրով կազմակերպուած վիճակահանութենէ գանձուած	814
Տոկոս	325
Եալովայի դաշտահանդէսէն	1,433
Հնթացիկ հաշիւ (պահանջը)	1,306
Դրամական տարբ. չահ	3.25
 <hr/>	 <hr/>
Գումար	33,861 <hr/>



ՄՈՒՏՔ

ԵԼՔ

ՕԳՈՒՏ ՄԻՈՒԹԵԱՆ

ԵԼՔ

դահնեկան արծար

Կելիէ-կիւղանի վարժ. Ա. տարեթոշակը	3,240
Նպաստ աղջ. որբանոցի	540
Նպաստ ֆօնախն	1,080
Որբ ուսանող Սիմօն Ուզունեանի հմր.	403
Դիւանական ծախք	752.50
Հնթացիկ հաշիւ (պահանջը)	1,293
Տէօչ Պանքի վճարուած դրօշմա- թուղթ ևն . :	17.25
 <hr/>	 <hr/>
Գումար	7,325.75
Պատրաստ դրամ	26.535.25
 <hr/>	 <hr/>
	33,861.—
	<hr/>

33,861.—

7,325.75



Ի վերջոյ Դիւանս հաճելի պարտականութիւն
մը կը համարէ իր ջերմ շնորհակալութիւնները
յայտնել, հաւասարապէս հայ մամուլին, կեդրոնի և
մասնամիջներու, այն գործադիր մարմիններուն և
անդամներուն, որոնք ջանք և եռանդ չզլացան
մեր Ազգօգուտ Միութեան անունը անմահացնելու
համար :

Ի դիմաց Ազգ. Միութեան
հրամատեալ դիւանին
Ասենադպիր
Լ.Ն.Պ. ՊԱՊՈՆԵԱՆ
Ասենապիր
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՍԿԵԱՆ



Կելիե-Կիւզանի մեր վարժարանին
առաջին աշակերտները

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԻԱՐ ԴԱՒԻԹ ԲԱՐՆԱԲԱՍԵԱՆԻ

Որուն պատօսի յանձնուեցաւ կեդր. դիւանիս կողմէ
իբրև «Ազգօգուս»ի պատուիրակ՝ ալցելել Կելիկ-
Կիւզան եւ տեղական բննութեամբ մը ստուգել մեր
վարժարանին խկական կացութիւնը :

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԳԻՒԱՆ ԱԶԳ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՅՑԱՐ-ՓԱՇԱ.

Յարգելի ընկերներ,

Յուշիս մէկին ազնիւ ընկերի մը հետ հասայ
Կելիէ-կիւզան։ Կէլին՝ ժողովուրդին բառարով,
կը գտնուի Սասունի կեդրոնը Հանտոք։ Կէրի ու
ծովասար լեռներու սառուար։ Մօտիկ 250 տունէ
կը բաղկանայ, ամէնքն ալ ցիր ու ցան ու զուրկ

հաղորդակցութեան պարզ միջոցներէ : Բնակլիչները անօրինակ չքաւորութեան մէջն են ու կ'ապրին կորեկով : Անոնց արտերը այս տարի սովորական հեղեղով մը ամբողջ իրենց ցանքը կորուսին : Այս կացութեան մէջ իսկ ես զանոնք տեսայ հպարտ ու չի յոդնող : Անոնք ինծ պատասխան պարձանագով գերեզմանները իրենց այն քաջ որդիներուն որոնք հանգիստ կը ննջն իրենց քովը , Հրայրի , Սերոր փաշայի սուրբ հողակոյախն շուրջ : Սամոյ ո՛չ մէկ ժողովուրդ այնքան կուռած , թալանուած ու հալածուած եղած է որքան Կելին : Անոնք պատմեցին ինծի իրենց կոփի հեքեաթներուն ամենէն գողարիկները ուր ամէն տուն իր կարմիր արիւնը թափեր էր Հանասոքի կատարը : Կելին սակայն այսօր անօթի է : Անոր սենեակի չափ ժայռուտ արտերը ոչինչ կ'արտադրէն :

Տեսայ և մեր գպրոցը փոքրիկ տան մը մէջ , գիւղին կեղրոնը , ժամուն՝ զրեթէ կից : Տղաք արդէն 15 օր առաջ իրենց քննութիւնները տուած ու մեկնած էին սարերը իրենց ոչխարներուն քով : Մէծ ջանքերով կրցանք հաւաքել տասնեակ մը աշակերտներ անոնց դւսումնական աշխատութիւնները ամարտ գնահատելու համար : Ազգօգուտի իւրաքանչները գնահատ որ իր լումայով մասնակցած է մեր չիւր անհատ որ իր լումայով մասնակցած է մեր ազգանուէր գործին , արդարեւ հպարտութիւն

մը պիտի զգայ տեսնելով այդ փոքրիկները որոնք յստակ կը խօսին , կը կարգան ու կ'երգեն խանդով երգերն իրենց կոռուող ու ազատութեան համար մեռնող հայրերուն . Ես ինքս չնորհակալ եմ Պատուական Դիւանիդ վայելերով կուշտ այդ հաճոյքը՝ այդ տղաք երեք տարի առաջ այբուբէնի առաջին գիրն անգամ չէին ձանչնար ու այսօր ամբողջ գիւղին մէջ այդ պատիկներն են որ միայն կարգացող գասակարգը կը կազմեն :

Դպրոցական երեք տարուան շրջանները սակայն առհասարակ միջակ կանոնաւորութեան մը մէջ անցան սա հետեւեալ պատճառներով .

Առաջին , դպրոցական պիտոյք՝ ըլլան թուղթ ու դասագիրք միշտ անբաւական եղած են հակառակ մեր լայն պիւտճէին : Մեր դպրոցը ապրած է հեռի գինքը նամող ու հոգացող աչքէն , ու Սրբազնը և Պարոն Զաւարեանը ինսամքի դոյլն բաժին մը միայն ստանձներ են ու րրեր . Դասատուն բնակեր է դպրոցէն մէկ ժամ հեռի ու սաստիկ տեղացող ձիւնին պատճառով իրեն անկարելի է եղեր ամիսով գպրոց գալը : Հոս ուղղամտութեան համար պարտիմ Զեզ հաղորդել նաև ժողովուրդին գանգատները վարժապետին մասին , որ հեռի ամէն տեսակ contrôleէ , վարեր է մեր դըպրոցը՝ ինչպէս իր խելքը , քէյֆը իրեն թելաղբեր են :

ալինյայտնի պատճառներէն յետոյ պիտի խնդրէի
Պատ . Դիւաննէդ որ հաճի մի քիչ յուշ ածել այն
հետագայ գարմանումի միջոցներուն վրայ զոր հի-
մա խոնարհաբար պիտի առաջարկեմ :

Իսձ այսպէս կը թուի թէ պէտք է անցնիլ անց-
նող շրջաններուն վրայ , որովհետեւ հետապնդելու
մեր իրաւունքին մէջ անկարողութիւն կայ : Ասոր
պատճառը մասամբ ալ Պատ . Դիւաննէ որ չէ
հասատած կանխամտածութեամբ ամսական կամ
գէթ եռամսեայ contrôleի գրութիւն մը չքիչ մը
աւելի մօտէն տեսնելու եղածն ու տնօրինելու կա-
րիքը :

Պէտք է այս' և այս իմ ամբողջ քննութեանս
արդիւնքն է ազատել միր գարոցը ազգային գործե-
րու խողովակէն : Դպրոցը պէտք է ո՛չ մէկ վերին
կապ ունենայ Մշոյ քաղքին հետ որ կելիէն հեռի
է զրեթէ երկու օր և ուր երթալու համար մարդ-
մը զօրաւոր կամք ու նպատակ ունենալու է , ո-
րովհետեւ Սասնոյ ճամբան բոլորովին լեռնոտ է :
Երկու օր քալեցի ես լեռներու մէջ որոնց իրա-
քանչիւրին կատարը ելնելը ու իջնելը վեց ժամ՝ կը
տեսէ .

Կազմեցի ես տեղական կարեւոր անձնաւորու-
թենէն մասնախումբ մը , որ պիտի հսկէ գարոցին
ընդհանուր գործերուն : Այս մարմինը իր մէջն

Երկրորդ՝ բայց մեծագոյն պատճառը Կելիի դիրքն
է : Երեսուն ոսկիով բացած մեր դպրոցը եթէ շնո-
ռած ըլլար դաշտին մէջ , այսօր մենք խիստ կա-
նոնաւոր ու յառաջադէմ դպրոց մը ունեցած պիտի
ըլլայինք Կելինի գիւղերը շնոռած են Սասունի ա-
մենէն մեծ լեռնաշղթաներուն , Հանառոքի ու բուն
կելիի լեռներուն կողքին վրայ , ցիրուցան ու ի-
րարմէ հեռի , անանկ որ ձմրան՝ պղափկներուն
բացարձակապէս անկարելի է փուփին պատճառով
մէկ տունէն միւսը երթալը : Զմեռը՝ գաւառի ու-
սանողութեան բուն շրջանը կ'անցնի այսպէս , իսկ
գարունը ու ամառը հայրերը քիչ բացառութեամբ
գարոցին կը հանեն իրենց տղաքները զանոնք հօ-
տագ ընկերու համար :

Երրորդ պատճառը՝ մեր զրկած դրամին լիովին
իր բուն նպատակին չգործածուիլն է : Մեր զրկած
գրամը յանձնուեր է Սրբազնի միջոցաւ տեղւոյն
Ուսումնի . Խորհուրդին , ուրիէ Պ , Զաւարեան հաւ-
ներ է միայն վարժապետին ամսականը :

Չորրորդ՝ անիրաւութեամբ ըսենք և հակառակ
կելիի բազմակարօտ պէտքին Մշոյ գործող մար-
մինները զրկեր են կելին այլ տեղերէ զրկուած
Սասնոյ անունով նուիրատուութենէն , որոնք եթէ
միանային մեր մեծ պիտանէին լաւագոյն և դրա-
կան արդիւնքներ կարելի պիտի ըլլար յուսալ : Այս

իսկ ընտրեց Պարոն կարապետ Աւետիսեանը իբր տեսուչ դպրոցին ու պատասխանատու հանդէպ այդ տեղական մարմնոյն և Կեդր . Պատ . Դիւանիդ : Ուրեմն կարելի է Ազգօգուտի ամբողջ թղթակցութիւնք ու դրամական հայիւ կարգադրել յիշեալ ուղղամիտ պարոնին հետ որ ամբողջ գպրոցին ու սումնական ու յարակից հոգերը անձնուիրաբար խոստացաւ ստանձնել :

Հեռուէն Պատ . Դիւանդ հակահսկողութեան լայն ու սիսթէմաթիք բաժին մը ունենալու է գործերը տնօրինելու ու վարելու : Պարափ նըշանակել Տեսուչի ու Մասնախումբին փոխադարձ պարտականութիւնները Դիւանիդ հանդէպ և այս միշտ գրաւոր պայմանագրութեան ձեւով : Պարմանի երկրորդ միջոցը գէթ կէս պիշերօթիկ գպրոց մը հաստաելու մէջ կը կայանայ : Ասոր համար Պատ . Դիւանդ պէտք է ձեռք ձեռքի տայ աշակերտներուն հայրերուն պիւտճէն բարձրացնելու համար : Կելիի կեդրոնական գիւղի հայրեր խոստացան իրենց տուներուն մէջ բաժնել ազգակցական կապով հեռաւոր գիւղերու աշակերտները : Միութիւնը իր կողմէն պարափ գպրոցին բարձրագոյն նպատակը աչքի առջեւ ունենալով իր 30 ուկին վրան յաւելում մը ընել :

Գալով գպրոցական չէնքին խնդրոյն կարեւոր

է յատուկ ու լայն դպրոց մը ունենալ երկու յարակից սենեակներով դասատուին համար : Ասոր համար աւելի ծախքի տեղը չկայ, միայն զօրաւոր կերպով պէտք է դիմում ըլլուի Մշոյ Առաջնորդարանի, որ ընդուուպ սկսի Սամոյ 20 գպրոցներու շինութիւնը, որոնց մէջ կելիի գպրոցն ալ նշանակուած է :

Լմնցնելէ առաջ կ'ուզեմ Զեզ հաղորդել ամբողջ կելիի բնակիչներուն անկեղծ չնորհակալիքը զիշենք Զեր հովանիին ու չնորհքին մէջ առած ըլլալինուդ համար : Անոնք ամէնքն ալ իրենց որդիներուն կը սորվեցնեն աղօթել ու երախապարար ըլլալ այն ազնիւ ու բարեսէր պարոններուն, որք իրենց մարդ ըլլալնուն պատճառ կ'ըլլան :

Դ . ԲԱ.ՌՆ.Ա.ԲԱ.ՍԵԱ.Ն

ԱԵԼ ՃՈՒ-**BUCORINA**

vis-à-vis Cavak

9 Օգոստոս 1911



2013





Կելիէ-Կիւզանի մեր վարժարանին
առաջին առակերտերը